ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հունվարի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկի և Կալինինգրադի միտրոպոլիտ Կիրիլին Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք ընտրվելու առիթով:

«Մենք հոգ–որ բերկրանք ենք ապրում, քանզի մեր քույր Եկեղեցին Աստծո կամքով ընտրեց իր արժանի Հովվապետին՝ Մոսկվայի – Համայն Ռուսիոյ Պատրիարքական Աթոռի 16-րդ պատրիարքին:

Ջրաղեցնելով բարձր – պատասխանատու պաշտոններ, իրականացնելով հսկայական հոգ–որ – հասարակական գործունեություն՝ Դուք, իբր– հոգ–որ առաջնորդ՝ «նախանձախնդիր բարի գործերի» (Տիտ. Բ 14), արժանացաք Ռուսաստանում – նրա սահմաններից դուրս բնակվող ինչպես Ռուս Ուղղափառ, այնպես էլ քույր Եկեղեցիների միլիոնավոր հավատացյալների – եկեղեցականների սիրուն – հարգանքին»,- մասնավորաբար ասվում է Հայրապետական ուղերձում:

Նորին Սրբությունը վստահություն է հայտնել, որ սերտ գործակցությամբ երկու Եկեղեցիները կշարունակեն բարի իրագործումներով հարստացնել դարավոր բարեկամությունը հանուն Եկեղեցիների պայծառության և ի մխիթարություն և բարօրություն երկու ժողովուրդների ու երկրների:

Անսասան Հովվապետական գավազան և կենաց արևշատություն մաղթելով նորընտիր Պատրիարքին՝ Վեհափառ Հայրապետը հայցել է Բարձրյալ Տիրոջից, որ նրա գահակալության տարիները վերածննդի մի նոր շրջան դառնան Ռուս Ուղղափառ Եկեղեցու և բարեպաշտ հոտի համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ